ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/124

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ Մասիսի համայնքապետարանի ներկայացուցիչ՝

Ս. Սիրեկանյանի (լիազորագիր տրված՝ 18.06.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2020թ. թիվ 26/26-1/8677-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Մասիսի համայնքապետարանի 08.06.2020թ. թիվ 423 գրության հիման վրա, 11.06.2020թ. թիվ 26/26-1/8677-2020 գրությամբ նախաձեռնել է «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/124 ընթացակարգի շրջանակներում 19.06.2020թ. ժամը 10:45-ին և 24.06.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Մասիսի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Մասիսի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2020թ. թիվ 423 գրությամբ հայտնել է, որ Մասիսի համայնքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 16.04.2020 թվականին կնքված ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրով վերջինս ստանձնած պարտավորությունով պարտավորվել էր մինչև սույն թվականի մայիսի 8-ը կատարել նախագծանախահաշվային աշխատանքներ:

Սակայն պայմանագրով սահմանված ժամկետը ավարտվել է և Ընկերության կողմից ոչ մի պարտավորություն չի կատարվել: Համայնքի կողմից 08.05.2020թ. գրություն է ուղարկվել Ընկերությանը՝ զգուշացնելով պայմանագրի հնարավոր լուծարման մասին:

Պատվիրատուն հայտնել է, որ 11.05.2020թ. Ընկերությունը ներկայացրել է գրություն, որով խնդրել է հաշվի առնելով արտակարգ դրությունը, ժամանակ տրամադրել, սակայն այդ ժամանակահատվածը անբարեխիղճ օգտագործելով՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները չի կատարել և խաթարել է համայնքապետարանի բնականոն աշխատանքը՝ ետ գցելով համապատասխան ծրագրերից:

Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետով և հաշվի առնելով պայմանագրի 2.1.3 կետը պայմանագիրը լուծել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/124 ընթացակարգի շրջանակներում 15.06.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/124 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/124 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Մասիսի համայնքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 16.04.2020թ. կնքվել է ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/4 ծածկագրով աշխատանքների գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն) ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցի պահանջների:

2. «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ուղղված 01.06.2020թ. թիվ 234 ծանուցմամբ՝ Մասիսի համայնքապետարանը հայտնել է, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն կողմերի միջև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունով պարտավորվել է մինչև սույն թվականի մայիսի 8-ը կատարել նախագծանախահաշվային աշխատանքները, սակայն պայմանագրով սահմանված ժամկետը ավարտվել է և Ընկերության կողմից ոչ մի պարտավորություն չի կատարվել: Ուստի ղեկավարվելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և հաշվի առնելով պայմանագրի 2.1.3 կետը՝ պայմանագիրը լուծվում է:

3. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 04.06.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.06.2020թ. թիվ 26/26-1/8677-2020 գրությունը, Մասիսի համայնքապետարանի 08.06.2020թ. թիվ 423 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Նույն օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Մասիսի համայնքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 16.04.2020թ. կնքվել է ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/4 ծածկագրով աշխատանքների գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցի պահանջների:

Պայմանագրի Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից հաշված 15 աշխատանքային օր:

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ուղղված 01.06.2020թ. թիվ 234 ծանուցմամբ՝ Մասիսի համայնքապետարանը հայտնել է, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն կողմերի միջև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունով պարտավորվել է մինչև սույն թվականի մայիսի 8-ը կատարել նախագծանախահաշվային աշխատանքները, սակայն պայմանագրով սահմանված ժամկետը ավարտվել է և Ընկերության կողմից ոչ մի պարտավորություն չի կատարվել: Ուստի ղեկավարվելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և հաշվի առնելով պայմանագրի 2.1.3 կետը պայմանագիրը լուծում է:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 04.06.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

բ) ***խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:***

Այսպիսով՝ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն իր և Մասիսի համայնքապետարանի միջև 16.04.2020թ. կնքված ԱՄՄՔ-ԳՀԱՇՁԲ-20/4 Պայմանագրով ստանձնել է Պայմանագրի Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտականությունը՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում: Արձանագրում եմ, որ համաձայն գործում առկա նյութերի, «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ Պայմանագրով նախատեսված աշխատանքները չի իրականացրել, խախտելով աշխատանքի կատարման ժամկետը, որի հետևանքով «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2020թ. թիվ 26/26-1/8677-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով

նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**